ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատու՝ [illegible]ակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության **և մշակույթի** [illegible] հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման գիտանախագծային ու **նախահաշվային** [illegible]տաթղթերի մշակման, դրանց համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման **աշխատանքների** [illegible]բերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ԲՇԱԾՁԲ-17/42** ծածկագրով գնման **ընթացակարգի** [illegible]նքում **2017 թվականի հունիսի 13-ին** կնքված N ***«ՀՀՄՆ-ԲՇԱԾՁԲ-17/42-1»*** ծածկագրով **պայմանագրում** [illegible]**թվականի հոկտեմբերի 18-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ **տեղեկատվությունը** [illegible] կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի **պատճենը:**

Փոփոխությունը [illegible] **առաջացման** պատճառ **N 1:** Կատարողի կողմից առաջարկվել է երկարաձգել **հուշարձանի** գիտ[illegible]սագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, դրա համալիր փորձաքննության **եզրակացության** [illegible]տադրման աշխատանքների կատարման ժամկետը:

Փոփոխությունը [illegible]կարագրություն՝ Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման **ժամանակացույցը** [illegible]ելվածում աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում մինչև 2017 թ-ի **նոյեմբերի 17-ը:**

Փոփոխությունը [illegible]հիմնավորում: ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ **հաստատված «Գ**[illegible]ների գործընթացի կազմակերպման կարգի» 60-րդ կետի 4-րդ ենթակետ:

Սույն հա[illegible]ության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **գնումների համա**[illegible]ող՝ Ն. Կարապետյանին:

Հեռախոս [illegible]3-51-78:

Էլ. փոստ [illegible]ject@mail.ru:

Պատվիրատու՝ [illegible] **ՀՀ մշակույթի նախարարություն**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ԳԻՏԱՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ԴՐԱ ՀԱՄԱԼԻՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/42-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «18» հոկտեմբերի 2017 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ն, ի դեմս Հ. Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հունիսի 13-ին կնքված պետության կարիքների համար պատմության և մշակույթի հուշարձանի գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, դրա համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման պետական գնման N **«ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/42-1»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.4 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 60-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Պատվիրատուն և Կատարողը համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.2. Պայմանագրի Հավելված 1-ի՝ ՀՀ Արարատի մարզի Լուսառատ համայնքի Արտաշատ քաղաքատեղիի բաղնիքների և խճանկարների ամրակայման (թանգարանացման) և մասնակի վերականգնման և ՀՀ Արարատի մարզի Արգավանդ համայնքի Թուրքմենական դամբարանի տարածքի բարեկարգման (ջրահեռացման) գիտանախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, դրանց համալիր փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցերում աշխատանքների կատարման ժամկետի ավարտը՝ **«20 հոկտեմբեր 2017 թ.»** բառերը փոխարինել **«17 նոյեմբեր 2017 թ.»** բառերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված են 2 (երկու) էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական շենք N 2, հեռ.՝ (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011013183 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ Հասցեն՝ ՀՀ գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ հեռ.՝ 095 000 867 էլ. հասցեն՝ haferdgas@mail.ru ՀՎՀՀ 08417097, հ/հ 220083334700000 ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ Գեղարքունիք մ/ճ
Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Մուրադյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ Հ. Գևորգյան (ստորագրություն) Կ.Տ.